ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1656-Ա/2 **«31» օգոստոսի 2023թ.**

«ՎՐԱՑԵՐԵՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 8-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 1144-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. «Վրացերեն» առարկայի 8-րդ և 11-րդ դասարանների ծրագրերը որպես օտար լեզու երաշխավորել գործածության՝ համաձայն հավելվածի:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի 2023 թվականի 31 օգոստոսի
N 1656-Ա/2 հրամանի

ՎՐԱՑԵՐԵՆԻ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
8-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ / 68 ժամ /

Դասընթացի նպատակն է ավելի հարստացնել սովորողների բառապաշարը՝ ներմուծելով նոր բառեր և արտահայտություններ, որոնք ընդգրկում են ավելի բազմազան ու լայն թեմաներ (նախասիրություններ, աշխատանքային գործունեություն, կենդանական աշխարհ, սնունդ, ճանապարհորդություն, սպորտ, մշակույթ, հայրենիք և այլ թեմաներ), ծանոթացնել վրացերենի քերականության համեմատաբար ավելի բարդ բաժիններին, ցույց տալ բառակազմական վերջածանցների կարևությունը նոր բառեր կազմելու գործում, սովորեցնել բայերի խոնարհման կանոնները տարբեր եղանակաձևերով, ներկայացնել հետադրություններն ու կապական բառերը որպես ոչ ինքնուրույն խոսքի մասեր: Դասընթացի նպատակն է նաև սովորողների մոտ զարգացնել հաղորդակցման հմտությունները, մասնավորապես լսելու և խոսելու կարողությունները, ինչպես նաև կարդացած կամ լսած նյութը վերարտադրելու ունակությունները:

Թեմա 1 (14 ժամ)

Բառապաշար

Նպատակ

- Սովորողների բառապաշար ներմուծել այնպիսի բառեր և արտահայտություններ, որոնց շնորհիվ նրանք կկարողանան զրուցել հետևյալ թեմաների շուրջ՝ կենդանական և բուսական աշխարհ, սնունդ, միրգ ու բանջարեղեն, սպասքի պարագաներ, նախասիրություններ, աշխատանքային և մասնագիտական գործունեություն, ճանապարհորդություն, էքսկուրսիաներ, սպորտ, մշակույթ:

- Սովորողների մոտ հարստացնել Հայաստանին (պատմություն, աշխարհագրական դիրք, քաղաքներ, բնակչություն, խորհրդանիշներ, մշակութային ժառանգություն, ավանդույթներ, տոներ և այլն) և հայերին առնչվող թեմատիկ բառապաշարը:
- Զարգացնել վերոնշյալ թեմաների շրջանակներում ոչ բարդ հարցերին պատասխանելու և սեփական, ինքնուրույն խոսքը կազմելու կարողությունը:

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

- ընտանի և վայրի կենդանիների անվանումները, նրանց հատկանիշները բնորոշող բառապաշարը
- սննդամթերքի տեսակները և նրանց հատկանիշները, սպասքի պարագաներն անվանող բառապաշարը
- տարբեր ազգությունների, երկրների անվանումները
- աշխատանքային առօրյային, նախասիրություններին վերաբերող բառապաշարը
- մարզական և մշակութային ոլորտներին առնչվող բառեր և արտահայտություններ
- սեփական հայրենիքը՝ Հայաստանը, ներկայացնելու համար տարբեր ոլորտներին վերաբերող բառապաշար
-

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

- խոսել կենդանական աշխարհի մասին՝ ներկայացնելով դրա ընդհանուր հատկանիշները
- պատասխանել սնվելու ռեժիմի, սննդամթերքի տեսակների վերաբերյալ պարզ հարցերին և փոխադարձ հարցեր ուղղել զրուցակցին՝ գործածելով պարզ բառեր ու նախադասություններ
- վրացերենով ներկայացնել սեփական երկիրն ու ազգությունը, պատասխանել իր ծագման, երկրի մասին հնչող պարզ հարցերին, ինչպես նաև ունենալ որոշակի տեղեկություններ այլ երկրների, ազգությունների, նրանց ծագման և լեզվի մասին
- կարդալ, լսել և հասկանալ նախասիրությունների և հետաքրքրությունների, աշխատանքային գործունեության մասին պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն), ինչպես նաև պատմել սեփական նախասիրությունների, մասնագիտական գործունեության մասին
- ընթերցել և հասկանալ տեղեկատվական բնույթի պարզ տեքստեր (մարզական իրադարձություններ, կարճ հոդվածներ, գովազդներ), համառոտ պատմել մարզաձևերի, մարզիկների, մարզական իրադարձությունների մասին
- լսել և հասկանալ, կարդալ և հասկանալ մշակույթի թեմայով հնչող կամ գրված պարզ խոսքը, խոսել, ներկայացնել ոչ ծավալուն նյութ մշակույթի որևէ գործչի կամ որևէ ճյուղի վերաբերյալ, սույն թեմաների շրջանակներում պատասխանել հարցերին և մտնել երկխոսության մեջ
- լսել և հասկանալ, ընթերցել և հասկանալ Հայաստանի մասին որևէ տեքստի կամ տեսանյութի հիմնական բովանդակությունը, սահուն ներկայացնել նախօրոք պատրաստած խոսքը հայկական ազգային արժեքների, ավանդույթների, մշակութային արժեքների մասին

Բովանդակություն

- ընտանի և վայրի կենդանիների անվանումներ, դրանց կենսագործունեությանը բնորոշ բառապաշար

- սննդամթերքի անվանումներ, սպասքի պարագաներ, սնվելու ռեժիմին առնչվող բառեր և արտահայտություններ
- երկրների, ազգությունների անվանումներ
- նախասիրությունների, զանազան զբաղմունքների, աշխատանքային առօրյայի վերաբերյալ բառապաշար
- մարզաձևերի անվանումներ, սպորտային գործունեությանն առնչվող բառեր և արտահայտություններ
- մշակութային գործունեության ձևերին, հոգևոր և նյութական մշակույթին, մշակութային գործիչների կենսագրությանը և ստեղծագործական կյանքին, մշակութային ժառանգության պահպանմանը, միջմշակութային շփումներին առնչվող բառապաշար
- հայրենիքը բնութագրելու համար անհրաժեշտ բառեր և արտահայտություններ, որոնք ընդգրկում եմ հետևյալ ոլորտները՝ պատմություն, աշխարհագրություն, մշակույթ, ժողովրդական բանահյուսություն և այլն

Ուսումնական նյութեր

- պաստառներ (կենդանիների նկարներ, սննդի հետ կապված նկարներ, երկրների, ազգությունների անվանումներ, մայրաքաղաքներ և այլն)
- զրուցարան
- թեմաներին համապատասխան աուդիո և տեսանյութեր
- բանաստեղծություններ, հանելուկներ
- մուլտֆիլմեր, կարճամետրաժ ֆիլմեր
- տեքստեր

Ուսումնական գործունեության տեսակներ

- պրեզենտացիա
- դերախաղ
- խաղ-վիկտորինա
- խմբային աշխատանք
- քննարկումներ
- երկխոսություն
- հարցուպատասխան, բանավեճ
- զեկույցների ներկայացում
- թարգմանություն

Թեմա 2 (7 ժամ)

Բառակազմական վերջածանցներ

Նպատակ

- ծանոթացնել վրացերենի ամենագործածական վերջածանցներին
- սովորեցնել բառակազմական վերջածանցների կցման կանոններն ու օրինաչափությունները

- ցույց տալ վերջածանցների կարևությունը նոր բառեր ստեղծելու գործում

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

- վրացերենի ամենագործածական վերջածանցները
- վերջածանցների կցման կանոնները
- վերջածանցների օգնությամբ նոր բառեր կազմելու հնարավորությունները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

- ցույց տալ վրացերենի ամենագործածական վերջածանցները
- գրագետ և քերականական կանոններին համապատասխան կիրառել վերջածանցները՝ ստանալով նոր բառեր
- տարբերակել վերջածանցներն ըստ իրենց բառակազմական նշանակության և գործառնական կիրառության

Բովանդակություն

- ինչ է վերջածանցը, վերջածանցների դերը բառակազմության մեջ
- վերջածանցների կցման ժամանակ ձայնավորների սղման և հատման կանոնների գործածումը
- **-იან, -ოსან, -ოვან, -იერ, -ედ, -ა** բառակազմական վերջածանցները և դրանց գործածման առանձնահատկությունները
- **-ობა, -ება** գոյականակերտ վերջածանցները
- **მე-ე, სა-ე, სა-ო, ნა-არ** նախածանց-վերջածանցները և դրանց գործածման առանձնահատկությունները

Ուսումնական նյութեր

1) տեսական նյութ
2) վերջածանցների ուսուցողական աղյուսակներ, պաստառներ
3) վարժություններ
4) թեստեր
5) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

6) բառախաղեր
7) անհատական հանձնարարություններ
8) խմբային աշխատանք
9) դասարանային գործնական աշխատանք
10) զուգադրություններ հայերենի վերջածանցների հետ

Թեմա 3 (8 ժամ)

Հետադրություններ

Նպատակ

- աշակերտներին ծանոթացնել հետադրություններին՝ որպես առանձին խոսքի մաս
- ցույց տալ, թե որոնք են հետադրությունների գործառույթները վրացերենում
- ներկայացնել հետադրություններն ըստ համապատասխան խմբերի

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

- հետադրության դերը վրացերենում՝ որպես ոչ ինքնուրույն խոսքի մաս
- հետադրությունների գործածության առանձնահատկություններն ու հնարավորությունները
- հետադրությունների խմբավորման սկզբունքները և խմբերից յուրաքանչյուրի գործածության առանձնահատկությունները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

- ընկալել հետադրությունների գործառութային նշանակությունը
- գրավոր և բանավոր խոսքում ըստ անհրաժեշտության գործածել համապատասխան հետադրությունները
- խմբավորել հետադրություններն ըստ իրենց իմաստային և գործառնական նշանակության
- ներկայացնել վրացերենի ամենագործածական հետադրությունները և դրանց կիրառման կանոնները

Բովանդակություն

- հետադրությունները վրացերենում, դրանց ընդհանուր բնութագիրը
- հետադրությունների կիրառության ձևերը և նշանակությունը
- հետադրությունների խմբավորումն ըստ տեսակների
- **-ზე, -ში, -კენ, -თვის, -გან** հետադրությունները և դրանց գործածման առանձնահատկությունները
- **-ვით, -ურთ, -მდის, -ამო, -მიერ** հետադրությունները և դրանց գործածության առանձնահատկությունները
- **-მიმართ, -შორის, -შუა, -გარდა** հետադրությունները և դրանց գործածման առանձնահատկությունները

Ուսումնական նյութեր

11) տեսական նյութ
12) հետադրությունների ուսուցողական աղյուսակներ
13) վարժություններ
14) թեստեր
15) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

16) բառախաղեր
17) անհատական հանձնարարություններ
18) խմբային աշխատանք
19) դասարանական գործնական աշխատանք
20) թարգմանություն

Թեմա 4 (6 ժամ)

Ապառնի ժամանակ

Նպատակ

- ծանոթացնել վրացերենում ապառնի ժամանակի արտահայտման համար կիրառվող ժամանակաձևերին
- ցույց տալ վերոնշյալ ժամանակաձևերի գործածության տարբերություններն ու առանձնահատկությունները

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

- ապառնի ժամանակի արտահայտման ձևերը վրացերենում
- ապառնի ժամանակի ժամանակաձևերի կազմության համար գործածվող վերջածանցները և դրանց կցման կարգը

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

- հստակ պատկերացնել ապառնի ժամանակի կատեգորիկ և ոչ կատեգորիկ ժամանակաձևերի միջև առկա տարբերությունները
- գրավոր և բանավոր խոսքում գործածել սույն ժամանակաձևերով խոնարհված բայեր՝ հետևելով քերականական կանոններին
- խոնարհել ցանկացած բայ ապառնի ժամանակով

Բովանդակություն

- ապառնի ժամանակի արտահայտման ձևերը վրացերենում
- ապառնի ժամանակաձև. ինչ է ցույց տալիս, ինչպես է արտահայտվում
- 2-րդ ստորադասական ժամանակաձևի բնութագիրը, գործառնական նշանակությունը, խոնարհման ժամանակ գործածվող վերջածանցները **(-ա, -ը, -ռ)**
- երկու ժամանակաձևերի գործածության հնարավորություններն ու առանձնահատկությունները լեզվական տարբեր ոճերում

Ուսումնական նյութեր

21) տեսական նյութ
22) վարժություններ
23) թեստային աշխատանքներ
24) ուսուցողական հոլովակներ

25) բայերի խոնարհման աղյուսակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

26) գործնական աշխատանք դասարանում
27) տնային հանձնարարություն
28) բառախաղեր
29) երկխոսություններ
30) թարգմանություն

Թեմա 5 (6 ժամ)

Մակբայ

Նպատակ

- սովորողներին ծանոթացնել վրացերենի մակբայներին և դրանց հիմնական բնորոշ առանձնահատկություններին
- ցույց տալ մակբայների գործածության ձևերը և գործառնական նշանակությունը
- սովորեցնել մակբայների կազմության ձևերը

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

- մակբայների բնութագիրն ու գործածությունը վրացերենում
- մակբայների տեսակներն ըստ կազմության
- մակբայների տեսակներն ըստ իմաստի

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

- հստակ տարբերակել վրացերենի մակբայները մյուս խոսքի մասերից
- խմբավորել մակբայներն ըստ տեսակի, ցույց տալ մակբայների իմաստատարբերակիչ նշանակությունը
- խմբավորել մակբայներն ըստ կազմության՝ պարզ, ածանցավոր, բարդ
- նախադասության մեջ գործածել մակբայներ՝ պահպանելով վերջիններիս կիրառման քերականական կանոնները

Բովանդակություն

- մակբայի ընդհանուր բնութագիրը
- տեղի մակբայները վրացերենում
- ժամանակի մակբայները վրացերենում
- ձևի մակբայները վրացերենում
- չափ ու քանակի մակբայները վրացերենում
- մակբայների կազմությունը, մակբայակերտ վերջածանցներ
- մակբայների շարահյուսական գործածությունը

Ուսումնական նյութեր

31) տեսական նյութ
32) ուսուցողական պաստառներ, աղյուսակներ
33) զրուցարան
34) վարժություններ
35) թեստեր
36) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

37) գործնական աշխատանք դասարանում
38) տնային հանձնարարություն
39) բառային աշխատանք
40) տեքստային աշխատանք
41) թարգմանություն

Թեմա 6 (12 ժամ)

Ըղձական, հրամայական, հարկադրական, անհրաժեշտ և պայմանական եղանակներ

Նպատակ

- աշակերտներին ծանոթացնել վրացերենի եղանակաձևերին
- ցույց տալ յուրաքանչյուր եղանակի իրականացրած գործառույթը
- ցույց տալ եղանակաձևերի կազմության համար անհրաժեշտ վերջածանցների կցման կանոնները
- ներկայացնել բայի եղանակաձևերի գործածության առանձնահատկությունները

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

- վրացերենում բայի եղանակները և դրանց կազմության ձևերը
- յուրաքանչյուր եղանակաձևի գործածության շրջանակներն ու առանձնահատկությունները
- յուրաքանչյուր եղանակաձևի կազմության ժամանակ կիրառվող վերջածանցները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

- հստակ տարբերակել վրացերենի բայի եղանակներն ըստ իրենց իմաստային և գործառնական նշանակության
- ցանկացած բայ խոնարհել ուսուցչի կողմից հրահանգված եղանակաձևով
- գրավոր և բանավոր խոսքում ըստ անհրաժեշտության գործածել բայերի՝ համապատասխան եղանակաձևերով խոնարհված տարբերակները
- գրագետ կերպով բայահիմքին կցել համապատասխան եղանակային նախածանցներն ու վերջածանցները՝ ցույց տալով նախածանցների և վերջածանցների կցման կարգն ու հաջորդականությունը

Բովանդակություն

- վրացերենի եղանակներ. ներածություն
- ըղձական եղանակ. ինչ է ցույց տալիս և ինչպես է կազմվում
- հրամայական եղանակի առաջին և երրորդ դեմքերը, գործածության առանձնահատկություններն ու օրինաչափությունները
- հարկադրական եղանակի ընդհանուր բնութագիրը, կազմությունը, կիրառությունը
- պայմանական եղանակ, եղանակային ցուցիչները և գործածության առանձնահատկությունները

Ուսումնական նյութեր

42) տեսական նյութ
43) վարժություններ
44) թեստեր
45) եղանակաձևերի նախածանց-վերջածանցների աղյուսակներով ուսուցողական պաստառներ
46) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

47) գործնական աշխատանք դասարանում և տնային հանձնարարություն
48) բառային աշխատանք
49) տեքստային աշխատանք
50) թարգմանություն
51) շարադրություն

Թեմա 7 (7 ժամ)

Անցյալ վաղակատար և անցյալ անկատար ժամանակաձևերը

Նպատակ

- աշակերտներին բացատրել անցյալ վաղակատար և անցյալ անկատար ժամանակաձևերի կիրառման առանձնահատկությունները
- ցույց տալ, թե ինչ վերջածանցների օգնությամբ են կազմվում վերոնշյալ ժամանակաձևերը

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

- անցյալ վաղակատար և անցյալ անկատար ժամանակաձևերի կազմությունը
- անցյալ վաղակատար և անցյալ անկատար ժամանակաձևերի գործածության շրջանակները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

- ընկալել անցյալ վաղակատար և անցյալ անկատար ժամանակաձերի նշանակությունը և գործառույթները
- խոնարհել ցանկացած բայ վերոնշյալ ժամանակաձևերով
- քաջ ծանոթ լինել սույն ժամանակաձևերի կազմության համար անհրաժեշտ վերջածանցներին և դրանց կցման կանոններին
- առանձին նախադասություններում, տեքստերում, ինչպես նաև բանավոր խոսքում գործածել համապատասխան ժամանակաձևերը, ինչպես նաև կատարել համապատասխան թարգմանություններ

Բովանդակություն

- անցյալ վաղակատար (վաղակատար առաջին և վաղակատար երկրորդ) ժամանակաձևերի կազմությունը
- անցյալ վաղակատար (վաղակատար առաջին և վաղակատար երկրորդ) ժամանակաձևերի կիրառությունը
- անցյալ անկատար ժամանակաձևի կազմությունը և վաղակատար ժամանակի կազմությունը
- անցյալ անկատար ժամանակաձևի գործառնական նշանակությունը

Ուսումնական նյութեր

52) տեսական նյութ
53) խոնարհման աղյուսակներ
54) քերականական վարժություններ
55) թեստային աշխատանքներ
56) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

57) գործնական աշխատանք դասարանում
58) տնային հանձնարարություն
59) երկխոսություններ
60) խմբային աշխատանք
61) տեքստային աշխատանք
62) թարգմանություն

Թեմա 8 (8 ժամ)

Բայական նախածանցներ

Նպատակ

- սովորողներին ներկայացնել բայական նախածանցների էությունն ու ընդհանուր բնութագիրը
- ցույց տալ, թե ինչպես և երբ են գործածվում նախադասության մեջ
- հայերենի հետ անցկացնելով զուգահեռներ՝ ցույց տալ նմանությունները և տարբերությունները հայերենի կապերի հետ

- բացատրել վրացերենի բայական նախածանցների և հայերենի կապական բառերի միջև առկա տարբերությունները

Վերջնարդյունքներ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է իմանա՝

- բայական նախածանցների ընդհանուր բնութագիրը և նրանց հիմնական հատկանիշները
- բայական նախածանցների գործածության ձևերը և շրջանակները
- վրացերենի ամենագործածական բայական նախածանցները

Թեմայի ուսումնասիրության արդյունքում սովորողը պետք է կարողանա՝

- ընկալել բայական նախածանցների դերն ու նշանակությունը
- տարբերել բայական նախածանցները, ցույց տալ դրանց գործածության առանձնահատկությունները
- գրավոր և բանավոր խոսքում քերականական կանոններին համապատասխան կերպով գործածել բայական նախածանցները
- խմբավորել բայական նախածանցները ըստ իրենց գործառնական առանձնահատկությունների

Բովանդակություն

- բայական նախածանցների ընդհանուր բնութագիրը
- այսկողմյա (մոտեցող) ուղղություն ցույց տվող բայածանցներ
- այնկողմյա (հեռացող) ուղղություն ցույց տվող բայածանցներ
- միավանկ և երկվանկ բայական նախածանցները
-

Ուսումնական նյութեր

63) տեսական նյութ
64) բայական նախածանցների խմբավորման աղյուսակներ
65) քերականական վարժություններ
66) թեստային աշխատանքներ
67) ուսուցողական հոլովակներ

Ուսումնական գործունեության տեսակներ

68) գործնական աշխատանք դասարանում
69) տնային հանձնարարություն
70) բառախաղեր
71) խմբային աշխատանք
72) բառային աշխատանք
73) թարգմանություն

Հիմնական գրականության ցանկ

1. Հ. Բայրամյան, **Վրացերենի դասընթաց (հնչյունաբանություն, բառագիտություն, ձևաբանություն)** Երևան: ԵՊՀ հրատ., 2017, 306 էջ http://publishing.ysu.am/hy/1506328692

2. ნ. შარაშენიძე **,,სიტუაციები და გრამატიკა კომუნიკაციისთვის''**თბილისი, 2011.

http://www.tafu.edu.ge/files/pdf/bible/el_tsignebi/saxelmdz/%E1%83%9B%E1%83%98%E1%83%93%E1%83%90%E1%83%9B%E1%83%9D%20%E1%83%A1%E1%83%98%E1%83%A2%E1%83%A3%E1%83%90%E1%83%AA%E1%83%98%E1%83%94%E1%83%91%E1%83%98%20%E1%83%93%E1%83%90%20%E1%83%92%E1%83%A0%E1%83%90%E1%83%9B%E1%83%90%E1%83%A2%E1%83%98%E1%83%99%E1%83%90%20%E1%83%99%E1%83%9D%E1%83%9B%E1%83%A3%E1%83%9C%E1%83%98%E1%83%99%E1%83%90%E1%83%AA%E1%83%98%E1%83%98%E1%83%A1%E1%83%97%E1%83%95%E1%83%98%E1%83%A1.pdf

3. **ქართული როგორც უცხო ენა**

http://www.geofl.ge/

4. **Վրացերեն-հայերեն բառարան**

Ռամազ Կ. Գորգաձե: Երեւանի համալսարանի հրատարակչություն, Երեւան, 2005:

http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=82&dt=KA_HY&pageNumber=568

5. **Հայերեն-վրացերեն բառարան**

მელიქსეთ–ბეგი, ლეონ სომხურ–ქართული ლექსიკონი/ გადაამუშავა, შეავსო და გამოსაცემად მოამზადა მერაბ რობაქიძემ.– თბ. : ნეკერი, 1996 წ.

http://www.nplg.gov.ge/gwdict/index.php?a=list&d=42&t=dict&w1=%D4%BD

6. **Վրացական էլեկտրոնային լրատվամիջոցներ:**